

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մամուլի աջակցության «Ինտերնյուս»

հասարակական կազմակերպության
անդամների ընդհանուր ժողովի

2013 թ. մայիսի 23-ի

ԹԻՎ 01/05 որոշմամբ



Գործադիր տնօրեն՝ Նունե Սարգսյան

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության
կոլեգիայի 20.02.1996թ., 9/1-9 որոշմամբ

ՎԵՐԱԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարի
24.11.1999թ., թիվ 1790 հրամանով

Նոր խմբագրությամբ կանոնադրությունը

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
02.10.2002թ.

Գրանցման համար 211.171.01269

Վկայականի համար 03Ա056352

Հարկ վճարողի հաշվառման համար 02521034


02.10.2002թ. գրանցված կանոնադրության թիվ
001-2 փոփոխությունը

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից

« 03 » 07 2013 թ.

ՀՀ պետական ռեգիստրի ղեկավար՝



Ա. Գևորգյան

*«Մեղիա նախաձեռնությունների կենտրոն»
հասարակական կազմակերպության*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նոր խմբագրությամբ

ք. Երևան 2013թ.

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա, հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված հասարակական միավորում է:
- 1.2 Կազմակերպությունը գործում է օրինականության, իրավահավասարության, ինքնակառավարման, ղեկավարման կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքներով:
- 1.3 Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ, չի հարում որևէ քաղաքական հոսանքի:
- 1.4 Կազմակերպությունը գործում է սույն կանոնադրության, ՀՀ օրենսդրության համապատասխան, իսկ այլ երկրներում՝ նաև նրանց օրենսդրության համաձայն:

1.5 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն

կրճատ՝ «Մեդիա նախաձեռնություններ» ՀԿ, հապավումը՝ ՄՆԿ

ռուսերեն՝ Общественная организация “Центр медиа инициатив”

կրճատ՝ ОО “Медиа инициативы”, հապավումը՝ ЦМИ

անգլերեն՝ “Media Initiatives Center” Non-Governmental Organization

կրճատ՝ “Media Initiatives” NGO, հապավումը՝ MIC

- 1.6 Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է կենտրոնամետ շրջաններ, որոնք բաղկացած են մանգաղակերպ նարնջագույն և մանուշակագույն չորս սեգմենտներից, որոնք տարանջատվում են շրջանաձև վիզուալ կենտրոնից: Խորհրդանիշի կենտրոնում գտնվող շրջանը խորհրդանշում է կազմակերպության կենտրոնացումը և ինքնորոշումը: Տարանջատվող սեգմենտները միաժամանակ ասոցիացվում են տարածության մեջ ազդեցություն սփռող ալիքների հետ (ռադիոալիքներ, ձայնային ալիքներ, ալիքներ ջրային մակերեսի վրա և այլն), ինչպես նաև սեգմենտների հատուկ դասավորության հաշվին խորհրդանշում են ժամանակի ու պատմության պարույրը: Ալիք-սեգմենտները խորհրդանշում են

«կենտրոնում» տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը միջավայրի ու հասարակության վրա և նշանակում են նախաձեռնություն, գործունեություն, շարժում, էվոլյուցիա:

Խորհրդանիշի աջ կողմում գրված է կազմակերպության անվանումը՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոն: Գոյություն ունեն խորհրդանիշի գունավոր (նարնջագույն և մանուշակագույն), միագույն (սպիտակ, մոխրագույն, սև) և միայն մոխրագույն տոներով տարբերակներ: Կազմակերպության խորհրդանիշը եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Խորհրդանիշը կարող է օգտագործվել նաև առանց կազմակերպության անվանման, բայց ոչ հակառակը:

1.7 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան 0023, Արշակունյաց պողոտա 3, 3-րդ հարկ:

2. Կազմակերպության նպատակներն ու գործունեության առարկան

2.1 Կազմակերպության նպատակներն են՝

- 2.1.1. Աջակցել մարդու հիմնարար իրավունքի՝ տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության իրականացմանը:
- 2.1.2. Աջակցել հասարակության համար բազմազան, բազմակարծիք և լիարժեք տեղեկատվության ստեղծմանը:
- 2.1.3. Աջակցել ազատ, պատասխանատու և պրոֆեսիոնալ մեդիայի գործունեությանը և զարգացմանը:
- 2.1.4. Աջակցել տեղեկատվության ստեղծման և տարածման գործընթացի մասնակիցների վերապատրաստմանը, զարգացնել մեդիա կրթությունը և գրագիտությունը:
- 2.1.5. Ձևավորել լրատվության կրթված սպառողի:
- 2.1.6. Աջակցել տեղեկատվության ոլորտում նորարար մոտեցումներին և սոցիալական մեդիայի նոր դրսևորումներին:
- 2.1.7. Աջակցել իրավական դաշտի օպտիմալացմանը և կատարելագործմանը՝ ապահովելով լրատվամիջոցների ազատ գործունեությունը, տեղեկատվության ազատ հոսքը, այդ թվում նաև տեղեկատվական աղբյուրների հասանելիությունը:
- 2.1.8. Օգտագործել մեդիան հանրային կարևորության տարբեր հարցերի քննարկման համար, այդ թվում՝ սոցիալական, բնապահպանական, տնտեսական, խաղաղասիրական, մարդու իրավունքներին առնչվող:

- 2.1.9. Աջակցել կարևոր հասարակական իրադարձությունների լուսաբանմանը:
- 2.1.10. Խթանել մեդիա գործիքների օգտագործումը կրթական գործընթացներում:
- 2.1.11. Օրենքով սահմանված կարգով տարածել մեդիան հասարակության լայն շերտերում՝ օգտագործելով տարբեր ավանդական և նորարարական մեթոդներ:

2.2 Իր կանոնադրական նպատակների իրականացման համար Կազմակերպությունը կազմակերպում և անցկացնում է կրթական դասընթացներ, համագործակցում է զանգվածային լրատվության միջոցների զարգացմամբ շահագրգռված կազմակերպությունների հետ, հրավիրում է կոնֆերանսներ, անմիջականորեն մասնակցում նմանօրինակ միջոցառումների, թարգմանում և տարածում է համապատասխան գրականություն, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործողություն՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

2.3 Կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենքով սահմանված կարգով՝

- 2.3.1 Ստեղծել լրատվամիջոցների աշխատակիցների համար հատուկ կրթական ծրագրեր, անցկացնել սեմինարներ, որակավորման դասընթացներ, վարպետության դասեր և այլ ուսումնական միջոցառումներ:
- 2.3.2 Պրոակտիվ մասնակցել մեդիա կրթության տարածմանը, մեդիա գրագիտության լայնածավալ կիրառմանը: Ստեղծել հաղորդակցության ոլորտում տարբեր առարկաների ակադեմիկ և ոչ ֆորմալ ուսումնական ծրագրեր և դասընթացներ՝ մեդիա կրթության գործընթացի մեջ ներգրավված տարբեր տարիքային ու մասնագիտական խմբերի համար:
- 2.3.3 Զարգացնել ստեղծագործական և քննադատական մոտեցումներ մեդիա արտադրանք ստեղծողների և սպառողների մոտ:
- 2.3.4 Աջակցել այլընտրանքային և նորարարական մոտեցումներին մեդիա բովանդակության ստեղծման մեջ: Ստեղծել սեփական նորարարական մեդիա բովանդակություն՝ հեռուստահաղորդումներ, ռադիոծրագրեր, վավերագրական ֆիլմեր, այլ տեսաձայնային, տպագիր և տարբեր մուլտիմեդիա արտադրանք:
- 2.3.5 Աջակցել քաղաքացիական լրագրության զարգացմանը, հետաքրքրված քաղաքացիներին սովորեցնել լրատվության ստեղծման և տարածման հիմունքները, լայնացնել ինֆորմացիա ստեղծողների շրջանակը՝ ուսուցանելով և մոտիվացնելով:

- 2.3.6 Անցկացնել բազմապիսի մասնագիտական ստեղծագործական մրցույթներ, փառատոններ:
- 2.3.7 Մասնագիտացված խորհրդատվություն տրամադրել զանգվածային լրատվության միջոցների լրագրողներին, պրոդյուսերներին և լրատվական դաշտի այլ մասնագետներին:
- 2.3.8 Կազմակերպել և անցկացնել ստեղծագործական և կազմակերպչական աուդիտներ լրատվամիջոցների համար:
- 2.3.9 Տրամադրել տեխնիկական աջակցություն կրթական և այլ ոչ-առևտրային նպատակների համար:
- 2.3.10 Աջակցել լրատվամիջոցների տեխնոլոգիական զարգացմանը, նպաստել կոնվերգենցիայի գործընթացներին: Բարձրացնել լրագրողների և մեդիա այլ աշխատակիցների տեխնոլոգիական կրթվածության մակարդակը:
- 2.3.11 Աջակցել հավասարակշիռ և բազմակողմանի տեղեկատվության ստեղծմանը և տարածմանը՝ հասարակական նշանակալի իրադարձությունների ժամանակ:
- 2.3.12 Անցկացնել հաղորդակցության ոլորտում բազմատեսակ հետազոտություններ՝ այդ թվում լրատվության պահանջարկի, գովազդի և արտադրանքի մասով:
- 2.3.13 Մասնակցել տեղեկատվությունն ազատ ստանալու և տարածելու, զանգվածային լրատվության միջոցների, սոցիալական լրատվամիջոցների, հաղորդակցման հարթակների գործունեության վրա ազդեցություն ունեցող օրենքների, իրավական ակտերի և այլ փաստաթղթերի մշակմանը և բարելավմանը:
- 2.3.14 Ակտիվորեն մասնակցել լրատվական գործընթացում ներգրավված տարբեր խմբերի ինքնակարգավորման համակարգերի ստեղծման և մշակման գործընթացներում:
- 2.3.15 Զարգացնել մեդիաքննադատությունը և մեդիավերլուծությունը, պատրաստել համապատասխան մասնագետներ:
- 2.3.16 Հնարավոր իրավական օգնություն տրամադրել լրագրողներին և զանգվածային լրատվամիջոցներին՝ իրենց շահերի և իրավունքների պաշտպանման համար:
- 2.3.17 Նպաստել տարածաշրջանում խաղաղասիրական գործընթացներին, հակամարտությունների կարգավորմանը և կանխարգելմանը, երկխոսության հաստատմանը, փակ թեմաների քննարկմանը, օգտագործելով մեդիան որպես

միջոց և գործիք՝ լայնացնելու այս գործընթացի մասնակիցների շրջանակը:

2.3.18 Նպաստել տեսաձայնային և մուլտիմեդիա գործիքների ստեղծմանը և օգտագործմանը՝ որպես լրացուցիչ մեթոդոլոգիական գործիք կրթության համար:

2.3.19 Բարձրացնել լրագրողի մասնագիտության համբավը և հեղինակությունը, ակտուալիզացնել լրագրության նշանակությունը հասարակության համար:

2.3.20 Աջակցել մեդիա պահոցների կարգավորմանը, կառավարմանը և լրացմանը, ինչպես նաև դրանց հասանելիության ապահովմանը հանրության համար:

2.3.21 Կազմակերպել լրատվական արշավներ հանրային նշանակություն ունեցող տարբեր թեմաներով՝ իրազեկման և հասարակական հնչեղության նպատակով:

2.3.22 Աջակցել հաղորդակցման, լրատվության, լրատվական կրթության ոլորտներին առնչվող դասագրքերի և ձեռնարկների ստեղծմանը:

3. Կազմակերպության իրավունքները

3.1 Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ իր պետական գրանցման պահից:

3.2 Կազմակերպությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

3.3 Կազմակերպությունն ունի կլոր կնիք իր անվանումով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով և իր խորհրդանիշի (կնիքի դեպքում՝ առանց անվանման նշան տարբերակով) պատկերմամբ, դրոշմակնիք, ձևաթղթեր, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամային, այնպես էլ տարադրամային:

3.4 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար օգտվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքներից:

4. Կազմակերպության պարտականությունները և պատասխանատվությունը

4.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

4.1.1 իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների

հրապարակայնորեն մատչելի լինելը,

4.1.2 ցանկացած ֆիզիկական անձի, հասարակական կազմակերպության կամ լրատվական գործունեություն իրականացնող անձի պահանջով, 7 օրացուցային օրվա ընթացքում, հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,

4.1.3 կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

4.2 Օրենքի և կանոնադրության խախտման համար կազմակերպությունը և նրա պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Կազմակերպության անդամությունը, անդամագրվելու և անդամությունից դուրս գալու կարգը, անդամների իրավունքներն ու պարտականությունները

5.1 Կազմակերպությանը կարող է անդամագրվել ՀՀ կամ օտարերկրյա ցանկացած չափահաս (18 տարեկան) քաղաքացի:

5.2 Կազմակերպության անդամագրվել ցանկացողը պետք է ընդունի կազմակերպության կանոնադրությունը, նպատակները, մասնակցի նրա գործունեությանը և մուծի մուտքի վճար:

5.3 Կազմակերպության անդամության և անդամությունից դուրս գալու մասին որոշում է ընդունում կազմակերպության վարչությունը:

5.4 Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող անձինք կազմակերպության վարչությանը պետք է ներկայացնեն գրավոր դիմում:

5.5 Կազմակերպության վարչությունն իր մոտակա հերթական նիստում քննարկում է անձի անդամագրվելու մասին ստացված դիմումը և ընդունում է որոշում, որի մասին մեկ շաբաթվա ընթացքում գրավոր և/կամ էլեկտրոնային հեռահաղորդակցության միջոցներով տեղեկացնում է դիմողին:

5.6 Կազմակերպության վարչության կողմից անդամագրվելու դիմումը բավարարելու մասին տեղեկանալուց հետո, դիմող անձը պարտավոր է մեկամսյա ժամկետում վճարել մուտքի վճար:

5.7 Անձը դառնում է կազմակերպության անդամ կազմակերպության վարչության կողմից անդամագրվելու մասին դիմումը բավարարելուց հետո մեկ ամսվա ընթացքում, մուտքի վճարը մուծելու պահից:

5.8 Կետ 5.7-ում նշված ժամկետում մուտքի վճարը չմուծելու դեպքում անձը զրկվում է

անդամագրվելուց՝ կազմակերպության վարչության որոշման հիման վրա:

5.9 Կազմակերպության անդամն իրավունք ունի դուրս գալ անդամակցությունից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով կազմակերպության վարչությանը:

5.10 Կազմակերպության վարչությունն իր հերթական նիստում քննում է անդամակցությունից դուրս գալու մասին անձի դիմումը և ընդունում որոշում:

5.11 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

5.11.1 Ընտրել և ընտրվել կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում,

5.11.2 կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, գանգատներ և առաջարկություններ,

5.11.3 օգտվել կազմակերպության խորհրդատվական, տեղեկատվական և այլ ծառայություններից,

5.11.4 պետական իշխանության և կառավարման մարմիններում քննարկվող իր հարցի վերաբերյալ օգտվել կազմակերպության աջակցությունից,

5.11.5 սպառիչ տեղեկատվություն ստանալ կազմակերպության գործունեության մասին,

5.11.6 մասնակցել կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,

5.11.7 անարգել դուրս գալ կազմակերպությունից,

5.11.8 օգտվել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

5.12 Կազմակերպության անդամն իրավունք ունի կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել կազմակերպության վերադաս մարմիններում՝ ներկայացնելով գրավոր բողոք: Կազմակերպության ղեկավար մարմինների, այդ թվում՝ բարձրագույն մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

5.13 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

5.13.1 հոգ տանել կազմակերպության հեղինակության բարձրացման մասին,

5.13.2 կատարել կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

5.13.3 աջակցել կազմակերպության անդամության համալրմանը,

5.13.4 ժամանակին կատարել անհրաժեշտ մուծումները:

- 5.14 Կազմակերպության կանոնադրությունը և վարքականոնը խախտող անդամի նկատմամբ կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ վարչության կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ, ընդհուպ մինչև կազմակերպության անդամությունից զրկումը:
- 5.15 Կազմակերպության անդամությունից զրկելու մասին կազմակերպության վարչության որոշումը կարող է գանգատարկվել կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին:

6. Կազմակերպության կառուցվածքը, ղեկավար, գործադիր և խորհրդատվական մարմինները

6.1 Ընդհանուր ժողովը

- 6.1.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը կազմակերպության անդամների ընդհանուր ժողովն է /այսուհետ՝ **Ընդհանուր ժողով**/, որին պատկանում է կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը: Ընդհանուր ժողովը գումարվում և անցկացվում է սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.1.2. Կազմակերպության հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ, գործադիր տնօրենի կողմից՝ կազմակերպության վարչության որոշման հիման վրա: Վարչության կողմից սահմանվում են նաև ընդհանուր ժողովի անցկացման օրակարգը և ժամկետները:
- 6.1.3. Կազմակերպության անդամները հերթական ընդհանուր ժողովի գումարման մասին տեղեկացվում են այն հրավիրելու օրվանից 15 օր առաջ:
- 6.1.4. Ընդհանուր ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում է անդամների առնվազն երկու երրորդը: Ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե որոշման ընդունման համար կողմ են քվեարկել կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելին, բացառությամբ կազմակերպության գործունեության դադարեցման կամ վերակազմակերպման մասին որոշման, որի համար պետք է կողմ քվեարկի կազմակերպության անդամների ընդհանուր թվի երկու երրորդը:
- 6.1.5. Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է անդամների մեկ երրորդի կամ վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգիչի/ պատճառաբանված պահանջով Վարչության կողմից: Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է 14 օրվա ընթացքում՝ ծանուցելով կազմակերպության անդամներին ընդհանուր ժողովի

անցկացման վայրի, օրվա, ժամի և օրակարգի մասին ոչ ուշ, քան այդ ժողովի անցկացման օրվանից 3 օր առաջ:

6.1.6. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- ա) կանոնադրության հաստատումը և նրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- բ) կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների, ինչպես նաև գործադիր տնօրենի և վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգիչի/ հաշվետվությունների հաստատումը,
- գ) կազմակերպության բարձրագույն մարմնին ենթակա և հաշվետու մարմինների՝ կազմակերպության վարչության, խորհրդի անդամների և գործադիր տնօրենի, ինչպես նաև վերահսկիչ մարմնի /վերստուգիչի/ ընտրությունը կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- դ) կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը,
- ե) ՀՀ օրենսդրությամբ ժողովի բացառիկ իրավասությանը պատկանող այլ հարցեր:

6.1.7 Կազմակերպության ժողովի որոշումների կատարումը պարտադիր է բոլոր անդամների համար:

6.2 Վարչությունը

6.2.1. Կազմակերպության կոլեգիալ ղեկավար գործադիր մարմինը կազմակերպության վարչությունն է: Հինգ հոգուց բաղկացած վարչությունն ընտրվում է կազմակերպության անդամներից, երկու տարի ժամկետով ընդհանուր ժողովի նիստի ընթացքում առաջադրված թեկնածուներից: Կազմակերպության գործադիր տնօրենն ի պաշտոնե վարչության հինգերորդ անդամն է:

6.2.2. Վարչությունը՝

- ա) սահմանում է անդամավճարի և մուտքավճարի չափը և վճարման կարգը,
- բ) հաստատում է կազմակերպության ծրագրային քաղաքականությունը,
- գ) քննարկում և ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում գործադիր տնօրենի հաշվետվությունները,
- դ) առաջարկություններ է ներկայացնում կազմակերպության ընդհանուր ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի լուծման համար,
- ե) կատարում է կազմակերպության անդամների ընդունում և ազատում կազմակերպության անդամությունից,

- զ) կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և տույժի միջոցներ,
- է) ստեղծում և լուծարում է կազմակերպության հիմնարկները, տնտեսական ընկերությունները, առանձնացված ստորաբաժանումները/մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, հաստատում է դրանց կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,
- ը) որոշում է կազմակերպության ղեկավար և խորհրդատու մարմիններում ընդգրկված անձանց վարձատրման կարգը և չափը,
- թ) իրավունք ունի քննել և լուծել կազմակերպության գործունեությանը վերաբերող ցանկացած հարց, բացառությամբ կազմակերպության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:
- 6.2.3 Կազմակերպության վարչությունն իր գործունեությունն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի ձևով:
- 6.2.4 Վարչության հերթական նիստը հրավիրվում է տարին երկու անգամ: Նիստերը հրավիրվում են գործադիր տնօրենի կողմից, որը վարչության անդամներին տեղեկացնում է նիստի անցկացման օրվա, ամսաթվի և օրակարգի մասին: Եթե սույն հոդվածում նշված ժամկետում գործադիր տնօրենը վարչության նիստ չի հրավիրում, ապա այն կարող է հրավիրվել վարչության անդամներից որևէ մեկի կողմից:
- 6.2.5 Վարչության արտահերթ նիստը կարող է հրավիրվել վարչության անդամի, գործադիր տնօրենի կողմից: Արտահերթ նիստ գումարելու մասին վարչության անդամները տեղեկացվում են ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 3 օր առաջ:
- 6.2.6 Վարչությունն իրավասու է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նիստին մասնակցում են վարչության անդամների առնվազն կեսից ավելին: Վարչության որոշումներն ընդունվում են վարչության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 6.2.7 Վարչության անդամների լիազորությունները կարող են դադարեցվել Կազմակերպության անդամների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:
- 6.2.8 Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից Վարչության անդամներից մեկի կամ մի քանիսի լիազորությունները վաղաժամկետ դադարեցման դեպքում Վարչության կազմը լրացվում կամ վերաընտրվում է ընտրությունների միջոցով:
- 6.2.9 Վարչության կազմի անդամներից մեկի կամ մի քանիսի դուրս գալու դեպքում Վարչության կազմը լրացվում է կազմակերպության անդամների հերթական կամ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից, որը հրավիրվում է Վարչության կողմից՝

սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.3 Խորհուրդը

- 6.3.1. Կազմակերպության խորհրդատվական մարմինն է կազմակերպության խորհուրդը, որը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից կազմակերպության անդամ չհանդիսացող այն անձանցից, որոնց թեկնածությունները առաջադրվում և հաստատվում են ժողովի կողմից:
- 6.3.2. Կազմակերպության Խորհուրդ կարող է ընտրվել երեքից հինգ անդամ՝ ընդհանուր ժողովի հայեցողությամբ:
- 6.3.3. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են գործադիր տնօրենի կողմից, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:
- 6.3.4. Գործադիր տնօրենը խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի անդամները կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել վարչության նիստերին:
- 6.3.5. Խորհրդի կազմի անդամներից մեկի կամ մի քանիսի կամավոր դուրս գալու դեպքում Խորհրդի կազմը լրացվում է հերթական ընդհանուր ժողովի կողմից:
- 6.3.6. Խորհուրդը՝
- ա) մշակում է միջոցառումներ կազմակերպության հեղինակության բարձրացման և հասարակական ճանաչման ուղղությամբ:
 - բ) առաջարկներ է ներկայացնում ընդհանուր ժողովին, վարչությանը և գործադիր տնօրենին:
- 6.3.7. Խորհրդի անդամների լիազորությունները կարող են դադարեցվել արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:
- 6.3.8. Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամներից մեկի կամ մի քանիսի լիազորությունները վաղաժամկետ դադարեցման դեպքում Խորհրդի կազմը լրացվում կամ վերընտրվում է նոր ընտրությունների միջոցով:

6.4 Գործադիր տնօրենը

- 6.4.1. Կազմակերպության ամենօրյա գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է գործադիր տնօրենը: Կազմակերպության գործադիր տնօրենն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով:
- 6.4.2. Կազմակերպության գործադիր տնօրենը՝
- ա) հրավիրում և վարում է վարչության և խորհրդի նիստերը,

բ) կոորդինացնում է վարչության և վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգիչի/ գործունեությունը,

գ) վավերացնում է նիստերի արձանագրությունները:

6.4.3. Կազմակերպության գործադիր տնօրենն իր իրավասությունների սահմաններում, առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը, տնօրինում է նրա գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, տալիս է լիազորագրեր, բանկերում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ, արձակում է հրամաններ, կազմակերպության վարձու աշխատողներին տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ:

6.4.4. Գործադիր տնօրենն իրականացնում է ընդհանուր ժողովի, վարչության և խորհրդի կողմից լիազորված այլ իրավասություններ:

6.4.5. Գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրա լիազորությունները կարող է դրվել վարչության անդամներից մեկի վրա՝ գործադիր տնօրենի կողմից տրված լիազորագրի համաձայն:

6.4.6. Արտահերթ ընդհանուր ժողովը իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել գործադիր տնօրենի լիազորությունները՝ ընտրելով նոր գործադիր տնօրեն:

6.4.7. Գործադիր տնօրենը կարող է հրաժարվել իր պաշտոնից՝ հրավիրելով Վարչության արտահերթ նիստ: Այդ դեպքում Վարչությունը իր անդամների կազմից ընտրում է գործադիր տնօրենի պարտականությունները ժամանակավորապես կատարող անձ և մեկ ամսվա ընթացքում սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հրավիրում է արտահերթ ընդհանուր ժողով:

6.5. Վերահսկիչ հանձնաժողովը

6.5.1. Կազմակերպության ֆինանսական գործունեության և գույքի օգտագործման վերահսկողությունը ընդհանուր ժողովի հայեցողությամբ իրականացնում է վերահսկիչ հանձնաժողովը կամ վերստուգիչը, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով:

6.5.2. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են երկու տարին մեկ անգամ: Հանձնաժողովի անդամների մեկ երրորդի կամ իրենց կողմից նախագահի պահանջով կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր: Վարչության անդամները չեն կարող լինել վերահսկիչ հանձնաժողովի անդամներ /վերստուգիչ/:

6.5.3. Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և

որոշումներ ընդունել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

- 6.5.4. Վերստուգիչն իր գործունեությունն իրականացնում է անձամբ՝ սույն կանոնադրությանը համապատասխան: Վերստուգիչը որոշումներն ընդունում է միանձնյա:
- 6.5.5. Վերահսկիչ հանձնաժողովը /վերստուգիչը/ ստուգում է կազմակերպության հաշվապահական փաստաթղթերը, հետևում գույքի պահպանմանը և ղեկավար մարմինների որոշումների կատարմանը:
- 6.5.6. Վերահսկիչ հանձնաժողովը /վերստուգիչը/ հաշվետու է միայն ընդհանուր ժողովին:
- 6.5.7. Վերստուգիչը կարող է հրաժարվել պաշտոնից՝ հրավիրելով կազմակերպության անդամների արտահերթ նիստ, որի ժամանակ ընտրվում է նոր վերստուգիչ:
- 6.5.8. Վերահսկիչ հանձնաժողովի անդամների /վերստուգիչի/ լիզորությունները կարող են դադարեցվել արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:
- 6.5.9. Կազմակերպության անդամների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից Վերահսկիչ հանձնաժողովի անդամներից մեկի կամ մի քանիսի լիազորությունները վաղաժամկետ դադարեցման դեպքում հանձնաժողովի կազմը լրացվում կամ վերընտրվում է նոր ընտրությունների միջոցով:
- 6.5.10. Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից վերստուգիչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցման դեպքում ընտրվում է նոր վերստուգիչ:
- 6.5.11. Վերահսկիչ հանձնաժողովի անդամներից մեկի, կամ մի քանիսի կամավոր դուրս գալու դեպքում Վերահսկիչ հանձնաժողովի կազմը լրացվում է արտահերթ ընդհանուր ժողովի կողմից, որը հրավիրվում է Վերահսկիչ հանձնաժողովի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

7. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրները և օգտագործման կարգը

- 7.1 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը կազմակերպության սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունի:

- 7.2 Սեփականության գոյացման աղբյուրներն են՝
- 7.2.1 անդամների մուտքի վճարները, անդամավճարները,
 - 7.2.2 կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից կատարված մասհանումները,
 - 7.2.3 ՀՀ և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանցից նվիրատվությամբ ստացված դրամական միջոցները և նյութական արժեքները,
 - 7.2.4 դրամաշնորհները,
 - 7.2.5 օրենսդրությամբ չարգելված այլ մուտքեր:
- 7.3 Կազմակերպությունն իր սեփականությունն օգտագործում է բացառապես կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

8. Կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը

- 8.1 Կազմակերպության վերակազմակերպումն իրականացվում է նրա ընդհանուր ժողովի որոշմամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
- 8.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել նրա ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ: Լուծարման մասին որոշում կայացնելիս՝ ընդհանուր ժողովը, արդարադատության նախարարության համաձայնությամբ, ստեղծում է լուծարային հանձնաժողով և օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանում լուծարման կարգը և ժամկետները:
- 8.3 Կազմակերպության լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո, մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է նրա կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

Սույն կանոնադրությունը կազմված է 23.05.2013թ. և բաղկացած է 16 թերթից:



MEDIA
INITIATIVES
CENTER



ՄԵԴԻԱ
ԻՆԻՑԻԱՏԻՎ
ԿԵՆՏՐՈՆ



ЦЕНТР
МЕДИА
ИНИЦИАТИВ

Translated from **Armenian**

Printed in 3 copies
Copy No.2

Approved

By decision No.01/05 of the General
Meeting of Members of “Media
Initiatives Center” NGO
taken on May 23, 2013

Executive Director /signature/
Nune Sargsyan

Registered

By decision No. 9/1-9 of the Colleague of
the Ministry of Justice of RA of
20.02.1996

Reregistered by order No. 1790 of the
Minister of Justice of RA of 24.11.1999

The Articles of Association in a new
wording is registered by the Central Body
of the State Register of Juridical Persons
of the Republic of Armenia on 02.10.2002
registration No. 211.171.01269

Certificate 03A 056352

RNTP 02521034

Amendment No. 001-2 to the Articles of
association, registered on 02.10.2002, is
registered by the Central Body of the State

Register of Juridical Persons of the
Republic of Armenia on 03.07.2013

Head of the State Register of RA
(signature) A.Gevorgyan

Official Seal of the State Register Agency
of Juridical Persons of the Ministry of
Justice of the Republic of Armenia

ARTICLES OF ASSOCIATION OF
“MEDIA INITIATIVES CENTER”
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
/NEW WORDING/

YEREVAN – 2013

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մ. ԲԱՐՏԳՐԱԾԻՐ
МАНУКЯН М. ПЕРЕВОДЧИК
MANUKYAN M. TRANSLATOR

1. GENERAL PROVISIONS

- 1.1 “Media Initiatives Center” NGO (hereafter – Organization) is a voluntary organization founded with the purpose to meet soul and not material requirements on the bases of self-governing, voluntary public organization.
- 1.2 The organization acts on the bases of voluntary, equality of rights, self-governing and legality, publicity.
- 1.3 The Organization doesn’t pursue political aims, doesn’t join to any political stream.
- 1.4 The organization acts according to the present Articles of Association, legislation of Republic of Armenia, and in foreign countries – pursuant to their legislation.
- 1.5 The name of the Organization is:

In Armenian: “Մեդիա Նախաձեռնությունների Կենտրոն”

Հասարակական Կազմակերպություն

Briefly: “Մեդիա Նախաձեռնություններ” ՀԿ, abbreviation: ՄՆԿ

In Russian: Общественная организация “Центр медиа инициатив”

Briefly: ОО “Медиа инициативы”, abbreviation: ЦМИ

In English fully: “Media Initiatives Center”

Non-Governmental Organization

Briefly: “Media Initiatives Center” NGO, abbreviation: MIC

